

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ ԸՆԿԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդական պետական քաղաքականության մշակման շրջանակներում երիտասարդության մասնակցային գործընթացների խթանման և ինստիտուցիոնալ հիմքերի զարգացման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2014 թվականի մարտի 27 ի № 56-Ա/1 հրամանի համաձայն երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը մշակելու համար ստեղծվել է շահագրգիռ մարմիններից բաղկացած աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի անդամների ակտիվ մասնակցությամբ մշակվել, հանրային քննարկումներից հետո լրամշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման և «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի № 798 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրության 33-րդ կետի համաձայն հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի № 1489-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մասին» № 798 որոշումը:

Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանման նպատակով 2014 թվականի ընթացքում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից իրականացվել են՝

- «*«Երիտասարդ» օն-լայն պարբերական*» ծրագիրը
«Երիտասարդ» օն-լայն պարբերականի հիմնական նպատակն էր երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել ու www.eritasard.am կայքի միջոցով տարածել հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում:
• «*Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում*» ծրագիրը

Ծրագրի արդյունքում ապահովվել է Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի

անխափան աշխատանքը, խթանվել է երիտասարդական կամ երիտասարդության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

- *«Երիտասարդական հեռուստահաղորդաշար»* ծրագիրը

Ծրագրի արդյունքում ստեղծվել է հեռուստահաղորդումների շարք, որի միջոցով բարձրացել է երիտասարդ քաղաքացիների իրազեկվածության աստիճանը երիտասարդության հրատապ թեմաների վերաբերյալ: 2014 թվականին մրցույթի արդյունքում ծրագիրն իրականացվել է «Արմնյուզ» հեռուստաընկերության կողմից, որի շրջանակներում շաբաթական մեկ անգամ հեռարձակվել է «Երևանն է խոսում» հեռուստահաղորդաշարը: Բացի այդ, ամսական մեկ անգամ «Ես» ամսագրում լույս է տեսել երիտասարդական էջ:

Կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը, որի նպատակով իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- *«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մրցույթի մասին տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում»* ծրագիրը

Ծրագրի հիմնական նպատակն է եղել հանրությանը իրազեկել Հայաստանի 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մրցույթի մասին: Արդյունքում տեսանկարահանվել և հեռարձակվել են Հայաստանի 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի մրցույթի և հռչակված մայրաքաղաքի հոլովակները: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝ https://www.youtube.com/watch?v=C-sNEoB_N0U, <https://www.youtube.com/watch?v=ZaWPzPGt7w4> :

- *«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի հայտերի ուսումնասիրման նպատակով այցելություն մարզեր»* ծրագիրը

Ծրագրի արդյունքում «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի համար դիմած Եղեգնաձոր, Ստեփանավան, Չարենցավան, Ծաղկաձոր, Քաջարան և Կապան քաղաքներում ուսումնասիրվել է հայտերում ներկայացված չափանիշների համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգով հաստատված պահանջներին:

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի հուլիսի 7-27-ը:

- *«2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն»* ծրագիրը

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի դեկտեմբերի 24-25-ը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Միջոցառման ընթացքում ցուցադրվել է հաշվետու տեսաֆիլմ, որով ներկայացվել են հատվածներ բոլոր այն միջոցառումներից ու ծրագրերից, որոնք 2014 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքում: Երիտասարդական մայրաքաղաքի բանալիները պաշտոնապես հանձնվել են Հայաստանի 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ստեփանավանին: Ծրագրի բոլոր մասնակիցներին բաժանվել են ծալաթերթեր, որում համառոտ ներկայացված էին 2014 թվականին Սիսիանում իրականացված միջոցառումներն ու ծրագրերը: Ծրագրի

շրջանակներում տպագրվել է «Սիսիանը 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք» հաշվետու գրքույկը: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝ <http://www.erit.am/index.php?lang=1&id=27926&t=6> :

«Վարձերում երիտասարդական պետական քաղաքականությունը ներկայացնելու, մարզային երիտասարդների հետ հանդիպելու և խորհրդակցություններ կազմակերպելու նպատակով իրականացվել են՝

- «Հանդիպում-քննարկում մարզային երիտասարդության շրջանում» ծրագիրը

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի մայիսի 12-22-ը: Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել Հայաստանի Հանրապետության 5 մարզերի (Կոտայք, Տավուշ, Լոռի, Գեղարքունիք, Շիրակ) մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդների անդամների հետ, ներկայացվել է պետական երիտասարդական քաղաքականությունը, տրամադրվել է տեղեկատվություն 2014 թվականին նախատեսված միջոցառումների և ծրագրերի մասին, վեր են հանվել երիտասարդական ոլորտին վերաբերող տեղերում առկա առավել հրատապ խնդիրները, ինչպես նաև մեթոդական աջակցություն է ցուցաբերվել մարզպետարանի համապատասխան աշխատակիցներին:

- «Երիտասարդական պետական քաղաքականության ներկայացում» ծրագիրը, որի նպատակն էր՝

1) Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասնակիցներին ներկայացնել երիտասարդական պետական քաղաքականությունը, տրամադրել տեղեկատվություն 2014 թվականին նախատեսված, ինչպես նաև իրականացված միջոցառումների և ծրագրերի մասին, վեր հանել երիտասարդական ոլորտին վերաբերող առավել հրատապ խնդիրները՝ քննարկումների միջոցով գտնելով դրանց լուծման ուղիներն ու հնարավորությունները:

2) Խթանել Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեությունը և հասարակական կյանքին երիտասարդների մասնակցությունը:

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի հոկտեմբերի 8-ից նոյեմբերի 16-ը:

- «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի ներկայացում, հանրային քննարկումներ» ծրագիրը

Ծրագրի նպատակն էր Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի նախագծի քննարկմանը երիտասարդության մասնակցության ապահովումը:

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 12-ը «Վրլոր» մարզերում:

Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանման նպատակով իրականացվել է՝

- «*Երիտասարդական մրցանակաբաշխություն-2014*» ծրագիրը, որի արդյունքում 2014 թվականի ընթացքում երիտասարդական քաղաքականության ոլորտում իրենց լավագույնս դրսևորած Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպություններին հանձնվել են խրախուսական մրցանակներ և վկայագրեր (ընդհանուր թվով՝ 14 երիտասարդական կազմակերպություն):
Մրցանակաբաշխությունն իրականացվել է 2014 թվականի դեկտեմբերի 27-ին Երևան քաղաքում:

Երիտասարդության շրջանում թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով իրականացվել է՝

- «*Հայաստանի Հանրապետության 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք Սիսիանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի»*» ծրագիրը

Ծրագրի մասնակիցները դասընթացների և խաղերի միջոցով ծանոթացել են թրաֆիքինգի խնդիրներին և դրա կանխարգելման ուղիներին, տեղեկացվել են այն կազմակերպությունների մասին, որոնց կարող են դիմել թրաֆիքինգի հետ կապված ցանկացած հարցով:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում 2014 թվականի հուլիսի 20-ից նոյեմբերի 20-ը:

- *Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 29-ի N 568-Ն որոշման 4-րդ կետի՝* Նախարարությունը նշված որոշման 3-րդ կետով նախատեսված 2,338,0 հազ. դրամ գումարը տրամադրել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նվիրաբերության պայմանագրի հիման վրա՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար 2014 թվականին մրցանակաբաշխություն կազմակերպելու նպատակով:

Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանման նպատակով իրականացվել է՝

- «*ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի և ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում*» ծրագիրը

2014 թվականի դեկտեմբերի 26-28-ը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում կազմակերպվել է սեմինար-դասընթաց «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» թեմայով՝ Լոռու մարզի 50 երիտասարդի մասնակցությամբ:

- «Երևան-Սյրեփանակերտ մարաթոնյան վազք և երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ՀՀ և ԼՂՀ երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը մարաթոնյան վազքի միջոցով: Ծրագրի շրջանակներում 5 մասնակից անցել են ողջ ճանապարհը և հանդիպել տեղի ավելի քան 150 երիտասարդների հետ: Արդյունքում նկարահանվել է նաև «Անկախության վազք» ծրագիրը, որը հեռարձակվել է «Արմնյուզ» հեռուստաընկերության «Սեփական փորձով» ծրագրի սահմաններում: Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի սեպտեմբերի 21-29-ը:

Երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և զբաղվածության հնարավորությունների մեծացման նպատակով իրականացվել է՝

- «Երիտասարդների ձեռնարկատիրական գործունեությունը խթանող սեմինար-դասընթաց» ծրագիրը

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի դեկտեմբերի 26-29-ը Աղվերանում: ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի և հարակից համայնքների 16-30 տարեկան 60 երիտասարդի տրամադրվել է իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կողմնորոշման և մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ: Սեմինար-դասընթացի միջոցով համապատասխան մասնագետները մասնակիցներին ներկայացրել են իրավաբանական անձանց տեսակները, փոքր և միջին ձեռնարկատիրությունը, պետական գրանցումը, հայաստանյան և միջազգային շուկայի առանձնահատկությունները, բիզնես ծրագրերի կազմումը, հարկային օրենսդրությունը, ֆինանսական հաշվետվությունների կազմման ու ներկայացման ձևերը:

- «Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. գործատու - երիտասարդ - ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները» ծրագիրը

Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջարկը, այն է՝ դուրս բերել աշխատաշուկայում պահանջված, գործատուների կողմից երիտասարդներից ակնկալվող հիմնական հատկանիշները՝ անձնային և մասնագիտական, ինչպես նաև երիտասարդ կադրերին բնորոշ հատկանիշները՝ անձնային և մասնագիտական՝ գործատուների նկարագրությամբ, մի քանի վարկանիշային մասնագիտությունների օրինակով խորությամբ ուսումնասիրել գործատու-երիտասարդ հարաբերությունների կայացման գործընթացում ուսումնական հաստատության և երիտասարդի ստացած կրթության դերը, առաջարկել գործատու-երիտասարդ հարաբերությունների կայացմանն ուղղված ինստիտուցիոնալիզացված մեխանիզմ:

- Հրատարակվել է «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները» սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունը: Զեկույցում ներկայացվել են զբաղվածության հիմնախնդիրների ընդհանուր բնութագրերը, կրթական համակարգի և աշխատաշուկայի փոխկապակցվածությունը, ինչպես նաև հատուկ անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրներին:

Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման նպատակով իրականացվել են՝

- «*Երիտասարդ առաջնորդների վերապատրաստում*» ծրագիրը

Ծրագրի նպատակն էր վիրահայ երիտասարդներին պատրաստել որպես առաջնորդների, որպեսզի հետագայում նրանք իրենց ակտիվ մասնակցությունը բերեն համայնքային կյանքի զարգացման և հայապահպանության գործին: Ծրագրին մասնակցել է 25 հայ երիտասարդ Վրաստանի տարբեր շրջաններից: Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի օգոստոսի 19-22-ը Վրաստանի Ծերովանի քաղաքամերձ ավանում:

- «*Ճանաչողական և համագործակցության ուխտագնացություն Հայաստան և Արցախ*» ծրագիրը

Ծրագրի նպատակն էր վիրահայ երիտասարդներին Արցախի հերոսամարտի պատմական և հոգևոր վայրերին ծանոթացնելը, ընկերական կապերի հաստատումը և համատեղ ծրագրերի մշակումը: Ծրագրին մասնակցել են Վրաստանի տարբեր մարզերից 20 հայ երիտասարդ: Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի հոկտեմբերի 21-23-ը: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝

http://www.artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=7733:2014-10-24-11-47-28&catid=7:2012-02-07-15-15-43&Itemid=21 :

Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների կազմակերպման նպատակով իրականացվել են՝

- «*ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստի Միսիան քաղաքում*» ծրագիրը

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի հունիսի 11-13-ը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Միսիան քաղաքում: ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստի ընթացքում քննարկվել են ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդական քաղաքականության ոլորտի հարցեր, կատարվել է փորձի փոխանակում, համատեղ ծրագրերի մշակում: Ծրագրի շրջանակներում նիստին մասնակցել են երիտասարդական ոլորտի 28 պաշտոնյաներ ԱՊՀ-ից և երիտասարդական աշխատողներ: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝ <https://www.youtube.com/watch?v=8CsXvezOeEA>:

- «*Միասնական աջակցություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականին*» ծրագիրը

Հայաստանի Հանրապետության մարզերից և Արցախից Հայաստանի ֆուտբոլի հավաքականի երկրպագուները, միանալով երևանաբնակ երկրպագուներին, աջակցել են Հայաստանի հավաքականին Սերբիայի հավաքականի (2014 թվականի հոկտեմբերի 11-ին) և Ֆրանսիայի հավաքականի (2014 թվականի հոկտեմբերի 14-ին) հետ վճռորոշ խաղերում:

- «*«Ինովացիոն մոտեցումները գիտության բնագավառում» միջազգային երիտասարդական գիտաժողով»* ծրագիրը

Ծրագրի նպատակն էր քննարկել գիտության տարբեր բնագավառների տարաբնույթ հիմնահարցերը, մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացման հիմնախնդիրները, հաստատել գիտական արդյունքների առևտրայնացման ուղղությամբ համագործակցություն, գիտական նոր կապեր, իրականացնել փորձի փոխանակում: Գիտաժողովին մասնակցել են Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և արտերկրի գիտական, գիտահետազոտական, ուսումնական հաստատությունների երիտասարդ գիտնականներ և հյուրեր: Ծրագրի շրջանակներում 2014 թվականի դեկտեմբերի 5-7-ը կայացած գիտաժողովին մասնակցել են 55 երիտասարդ: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝

http://heh.am/?module=article&utility=show_article&id_article=1906&lang=am :

Պետական երիտասարդության քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացման և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանման նպատակով իրականացվել են՝

- «*«Բարձրամի Արցախ-2014» երիտասարդական ինտերակտիվ ոչ ֆորմալ հանդիպում»* ծրագիրը

Ծրագիրը 2014 թվականի հուլիսի 24-28-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում համախմբել էր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետներին և ծրագրավորողներին, համացանց օգտագործողներին, բլոգերներին, սոցիալական ցանցերի, ինչպես նաև բոլոր շահագրգիռ անձանց և խմբերին, որոնք նոր տեխնոլոգիաներն ու համացանցը օգտագործում են իրենց աշխատանքում: Ստեղծել են բազմաբնույթ կապեր հայ և աշխարհի տարբեր երկրների երիտասարդների միջև:

Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝ <http://www.panorama.am/am/IT/2014/07/29/barcamp/> , <http://www.mediamax.am/am/news/karabakh/11069/> :

- «*Ծմակահողի երիտասարդ բնագետների ամառային դպրոց»* ծրագիրը

Ծրագրի հիմնական նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել ժամանակակից բնագիտական աշխարհայացքային պատկերացումներին, կազմակերպել ուսուցումներ գյուղական երիտասարդների շրջանում: Ծրագրի շրջանակներում Արցախի 80 երիտասարդներ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում մասնակցել են ծրագրին և ձեռք բերել համապատասխան հմտություններ:

Ծրագիրն իրականացվել է 2014 թվականի հուլիսի 17-27-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում:

Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանման նպատակով **2015 թվականի** ընթացքում Նախարարության կողմից իրականացվել են՝

- «*«Երիտասարդ» օն-լայն պարբերական*» ծրագիրը

«Երիտասարդ» օն-լայն պարբերականի հիմնական նպատակն էր երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել ու www.eritasard.am կայքի միջոցով տարածել հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում: Գլխավոր խնդիրն է բարձրացնել երիտասարդության իրազեկվածության մակարդակը, նրանց խնդիրները լսելի դարձնել հասարակության լայն շրջանակներին, ինչպես նաև երիտասարդությանը տեղեկացնել պետական երիտասարդական քաղաքականության մասին՝ այդ կերպ ապահովելով նաև երիտասարդական պետական քաղաքականության թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Այսպիսով՝ «Երիտասարդ» օն-լայն պարբերականի թիրախային հիմնական խումբը երիտասարդությունն է՝ իր գրեթե բոլոր շերտերով ու խնդիրներով:

Ծրագիրը մեկնարկել է 2015 թվականի մարտի 1-ին և կավարտվի 2015 թվականի դեկտեմբերի 30-ին:

- «*Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում*» ծրագիրը.

Ծրագրի նպատակն է ապահովել Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի անխափան աշխատանքը, ինչպես նաև հաշվի առնելով 2012-2014 թվականների գործարկման ընթացքում առաջացած խնդիրները և համակարգից օգտվող շահառուների կողմից կատարված առաջարկները՝ կատարելագործել այն՝ դարձնելով առավել մատչելի և կիրառելի:

- «*Հայաստանի Հանրապետության հասարակական - քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագրի և ծրագրի միջոցառումների նախագծի հանրային քննարկումներ*» ծրագիրը.

Ծրագրի նպատակն էր պետական կառավարման մարմինների որոշումների ընդունման գործընթացին, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագրին և ծրագրի միջոցառումներին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) քննարկանք երիտասարդության մասնակցության և Նախագծի հանրային քննարկման ապահովումը: Ծրագիրն իրականացվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի փետրվարի 4-ի № 02/14.4/1318-15 հանձնարարականի՝ 2015 թվականի մարտի 16-ից ապրիլի 3-ը: Կազմակերպվել են այցելություններ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզեր, տեղի են ունեցել հանդիպումներ Հայաստանի

Հանրապետության մարզպետներին առընթեր երիտասարդական խորհուրդների ներկայացուցիչների, ինչպես նաև մարզային երիտասարդության հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել է Նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի շրջանակներում 2015 թվականին իրականացվել է՝

- «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն» ծրագիրը

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցվածքների զարգացմանը:

Ծրագիրն իրականացվել է 2015 թվականի փետրվարի 25-27-ը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝ <http://www.erit.am/index.php?lang=1&id=28333> :

Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման նպատակով 2015 թվականին՝

- վճարվել է Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարը.

- 2014 թվականի մայիսից մինչ օրս տրամադրվել է 52 ուղևորության դրամաշնորհ:

Իրականացվել են՝

«Հայ-ռուսական երիտասարդական առաջին համաժողով» ծրագիրը

- Ծրագրի հիմնական նպատակներն էին՝ աջակցել երիտասարդական քաղաքականության ոլորտում հայ-ռուսական համագործակցության ամրապնդմանը, դյուրացնել քաղաքականության համապատասխան ոլորտներում երիտասարդական խնդիրների բարձրացումը և խթանել երիտասարդների կարիքներին համահունչ միջոլորտային համագործակցությունը:

Համաժողովի աշխատանքներին մասնակցել են ՀՀ և ՌԴ 150 ներկայացուցիչներ՝ երիտասարդության ոլորտի պետական պաշտոնյաներ, ազգային պետական մարմինների երիտասարդության ոլորտի պատասխանատու աշխատողներ, երիտասարդ առաջնորդներ, փորձագետներ, հետազոտողներ, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում թիմային աշխատանքների արդյունքում մշակվեցին որոշակի փաստաթղթերի նախագծեր, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Միջազգային երիտասարդական կենտրոն» պետական

դաշնային բյուջետային կազմակերպության միջև ստորագրվեց մտադրությունների հուշագիր:

Ծրագրի իրականացվել է 2015 թվականի փետրվարի 12-14-ը Երևանում:

Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝

<http://www.erit.am/index.php?lang=1&id=28264> ,

<http://www.erit.am/index.php?lang=1&id=28265> :

• ««Հավասար աշխարհ ունենալը հնարավոր է» երիտասարդական միջազգային խորհրդաժողով»» ծրագիրը

Ծրագրի նպատակն էր աշխարհի տարբեր երկրներից ժամանած պատվիրակությունների կազմում օտարազգի երիտասարդ մարդկանց ուշադրությունը հրավիրել մարդկության գլոբալ մարտահրավերներին և նրանց ներուժը ներդնել դրանց հաղթահարման համար, ինչպես նաև մշակել համատեղ դիմակայելու հնարավոր ուղիներ:

Ծրագիրն իրականացվել է 2015 թվականի մայիսի 5-11-ը Երևանում: Անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել այստեղ՝

<http://www.erit.am/index.php?id=31368&lang=1> :

Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն նպատակով Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով 2014 թվականի մայիսից մինչև 2014 թվականի վերջը Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրվել է 31 դրամաշնորհ, 2015 թվականի առաջին եռամսյակում՝ 3 դրամաշնորհ: 2015 թվականի երկրորդ եռամսյակում հաղթող է ճանաչվել 6 ծրագրի հայտ:

2014 թվականին 10 դրամաշնորհ տրամադրվել է Հայաստանի 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված Սիսիան քաղաքի հասարակական կազմակերպություններին՝ Սիսիանում ծրագրեր իրականացնելու նպատակով:

2015 թվականին 5 դրամաշնորհ տրամադրվել է Հայաստանի 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք հռչակված Ստեփանավան քաղաքի հասարակական կազմակերպություններին՝ Ստեփանավանում ծրագրեր իրականացնելու նպատակով: